

ԻՆՎԱԶԻՈՆ ՅԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձկնաբուծությունը ժողովրդական տնտեսության այն կարևորագույն ճյուղերից մեկն է, որն ազգաբնակչությանը տալիս է արժեքավոր սննդամթերք, արդյունաբերությանը՝ հումք, անասնապահությանը՝ կեր և կերային հավելումներ, բժկությանը՝ դեղանյութեր:

Չնայած նրան, որ մեր հանրապետության ջրավազաններում առկա են շուրջ 30 արդյունագործական նշանակություն ունեցող ձկնատեսակներ, մեր հանրապետությունը համարվում է թույլ զարգացած ձկնաբուծական և քիչ ձկնամթերքների օգտագործող երկիր (չնայած պահանջարկը բավականին մեծ է): Ձկնաբուծության զարգացվածության վրա իրենց հետք են թողնում մաև տարբեր էթնոլոգիայի հիվանդությունները, հատկապես մակաբուծային ծագման:

Վերջին տասնամյակների ընթացքում մեր հանրապետությունում ձկների մակաբուծային հիվանդությունների վերաբերյալ շատ քիչ աշխատանքներ են կատարվել: Մեր աշխատանքի նպատակն է որոշակի պատկերացում կազմել ձկների մոտ ներկայումս առկա ինվազիոն հիվանդությունների համաճարակաբանության մասին:

2008-2009 թթ. համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոնի լաբորատորիայում մակաբուծաբանական հետազոտության են ենթարկվել հանրապետության տարբեր շրջանների բնական և արհեստական ջրավազաններից տարվա տարբեր եղանակներին բերված 5 տեսակի (Սևանի սիգ, ծիածանափայլ իշխան, Սևանի իշխան, հաստաճակատ, ծածան) 393 տարբեր սեռահասակային խմբերին պատկանող թարմ ձկներ: Հետազոտությունների ժամանակ օգտագործվել են մակաբուծաբանության մեջ համընդհանուր կիրառություն ունեցող լրիվ հերձման մեթոդներ:

Կատարված հետազոտությունների արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում են աղյուսակում բերված տվյալներից, հետազոտված ձկների մոտ հայտնաբերվել են 9 մակաբուծային և սնկային հիվանդությունների հարուցիչներ: Դակտիլոգիրոզ հիվանդությունը հայտնաբերվել է հետազոտման ենթարկված մեկ տարեկանից բարձր հասակ ունեցող ծիածանափայլ իշխանի (30%), Սևանի իշխանի (12.5%), ծածանի (58%) մոտ: Սապրոլեզոնիոզ սնկային հիվանդության նկատմամբ ընկալունակ են հատկապես ծիածանափայլ իշխանի մանրաձկնիկները (0.4%): Հետազոտման ենթարկված ձկնատեսակների մեծամասնության մոտ հայտնաբերվել են տրիխոդինոզ հիվանդության հարուցիչներ: Օդակաձև որդերից՝ տզրուկների որոշ տեսակներ ակտիվ մակաբուծային կյանք են վարում մեկ տարեկանից բարձր իշխանազգի ձկների վրա:

Աղյուսակ 1

Մակաբուծաբանական հետազոտությունների ժամանակ ձկների մոտ հայտնաբերված հիվանդությունները

h/h	Հիվանդություններ	Ձկների տեսակը և հասակը								
		Միջ	Ծխածոմանուկային իշխան				Մեծ իշխան			Զատնան
		հ	մ	ծ	հ	մ	ծ	հ	հ	հ
1	Առողջ ձկներ	7	272	25	10			8	12	
2	Դա կտ իր լիցքի				3			1	7	
3	Ֆիլոմետրոսի							1		
4	Սալմոնելոզ		10							
5	Տրիխոդինոզ	1	2		3			1	2	
6	Լիգուլոզ								3	
7	Տրիխոդինոզ				19			1		
8	Բիստրոֆոսի	1	1					1		
9	Բուրդոզեֆալոզ									1
10	Դիպտերոզ									1
11	Ընդամենը հետազոտվել են	9	285	25	35			13	24	2

Ծանոթություն՝ աղյուսակում առկա հապավումների.

հ- հասակավորներ /մեկ տարեկանից բարձր/

մ- մանրաձկնիկներ /մի քանի ամսական/

ծ- ձկնիկներ /մեկ տարեկան/:

Երկու տարվա ընթացքում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ մակաբուծային հիվանդությունները հանրապետության բնական և արհեստական ջրավազաններում ունեն բավականին տարածվածություն, պատահականորեն վերցրած և հետազոտած 393 տարբեր սեռահասակային խմբերին պատկանող ձկների շուրջ 15 %-ի մոտ հայտնաբերվել են տարբեր տեսակի հիվանդությունների հարուցիչներ: Այս հիվանդությունները չնայած նրան, որ հիմնականում ունենում են խրոնիկական ընթացք, կլինիկական նշանները համեմատաբար թույլ են արտահայտվում, բայց ժամանակի ընթացքում ձկները հյուծվում են, ընկնում է ապրանքային տեսքը, նկատվում են անկումներ:

ПАЗИТНЫЕ БОЛЕЗНИ РЫБ В БАСЕЙНАХ АРМЕНИИ

В. В. ГРИГОРЯН, А. В. ГРИГОРЯН

В водоемах Армении были найдены 9 возбудителей различных инвазионных болезней рыб, которые вызывают у рыб истощение, потерю товарного вида и гибель.

PARASITIC DISEASES OF FISH IN THE WATER BASINS OF ARMENIA

V. V. GRIGORYAN, L. V. GRIGORYAN

In the fish, reared in ponds of the Republic of Armenia had been found 9 different types of pathogens of invasive diseases that lead to the fish depletion, reduce the salable conditions and cause death.

ИССЛЕДОВАНИЕ ИНТЕРФЕРОНОГЕННОЙ АКТИВНОСТИ БАКТЕРИОФАГА MS2

М. Д. ДАВИТАШВИЛИ

*Кандидат биологических наук, ассоциированный профессор кафедры
биологии-экологии Телавского государственного университета
им. Я. Гогешашили, Грузия*

Вопрос о том, какие (одно- или двуспиральные) структуры РНК вирусных или синтетических индукторов могут стимулировать интерферогенез, дискутируется до сих пор. Существующему мнению о том, что двух- или многоспиральность РНК является необходимым условием для интерферонообразования [1] противоречат данные других авторов, показавших, что изолированные односпиральные нуклеиновые кислоты могут быть также хорошими стимуляторами синтеза интерферона [2].

Также разноречивые результаты, полученные при исследовании интерфероногенной активности фагов и их нуклеиновых кислот. По данным некоторых авторов [3] только лишь репликативные формы бактериофагов MS2, f2 способны индуцировать интерферон. Несколько другие данные были представлены японскими авторами [4] относительно фага MS2 — однотяжевая РНК данного фага в результате обработки клеток куриного эмбриона индуцировала выработку интерферона и резистентность к вирусной инфекции.

В настоящем сообщении представлен материал по изучению интерфероногенной активности РНК-содержащего фага MS2 и разных препаратов, полученных в процессе приготовления концентрата данного фага.

Методика. В работе был использован бактериофаг MS2 — активный в отношении *Escherichia coli* С 3060 (F+), содержащий РНК (молекулярный вес РНК $0,95-1,15 \times 10^6$, размеры частиц 24 нм, длительность латентного периода 38 мин) [5]. Фаговые концентраты получали на бульоне с казеиновым гидролизатом и дрожжевым аутолизатом. Для полной адсорбции фаговых частиц на клетках *E. coli* добавляли хлорид кальция (до концентрации 2,2 мм). Выращивание после добавления фага продол-